«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ԼՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/02

ք. Ստեփանավան «13 » մայիսի 2021 թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ռ-Ղազարյան>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Աբրահամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ստեփանավան համայնքի փողոցների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.06.2021թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրենպատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին,

Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 12045360 (տասներկու միլիոն քառասունհինգ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 2007560 (երկու միլիոն յոթ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվումեն դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	<<Ռ Ղազարյան>> ՍՊԸ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ / 1	ք Վանաձոր, Տավրոս 21 փ 22 տ
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	<<Էվոկաբանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ
h/h900252260014	ՀՀ 1660014189780100
ՀՎՀՀ 06954104	ՀՎՀՀ 06958302
---------- /ստորագրություն/ Կ.Տ	---------- Ա.Աբրահամյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«13» մայիսի 2022թ. կնքված
ՀՀ-ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

/հազ դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Փոսային նորոգում հիմքով Թելման փողոց				**789,82**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	109,600	0,800	87,68
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	109,6	6,265	686,64
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	19,3700	0,800	15,50
	Փոսային նորոգում հիմքով Սուրբ նշան փողոց				**1993,30**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	276,600	0,800	221,28
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	276,6	6,265	1732,90
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	48,9000	0,800	39,12
	Փոսային նորոգում հիմքով Հ.Մեղապարտ փողոց				**665,15**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	92,300	0,800	73,84
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	92,3	6,265	578,26
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	16,3100	0,800	13,05
	Փոսային նորոգում հիմքով Եկեղեցու փողոց				**967,10**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	134,200	0,800	107,36
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	134,2	6,265	840,76
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	23,7200	0,800	18,98
	Փոսային նորոգում հիմքով Գրիգորյան փողոց				**194,57**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	27,000	0,800	21,60

2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	27,0	6,265	169,16
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	4,7700	0,800	3,82
	Փոսային նորոգում հիմքով Գ.Սունդուկյան փողոց				**572,91**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	79,500	0,800	63,60
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	79,5	6,265	498,07
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	14,0500	0,800	11,24
	Փոսային նորոգում հիմքով Վ.Տերյան փողոց				**588,76**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	81,700	0,800	65,36
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	81,7	6,265	511,85
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	14,4400	0,800	11,55
	Փոսային նորոգում հիմքով Պ.Դուրյան փողոց				**129,73**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	18,000	0,800	14,40
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	18,0	6,265	112,77
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	3,2000	0,800	2,56
	Փոսային նորոգում հիմքով Ռաֆֆի փողոց				**417,97**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	58,000	0,800	46,40
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	58,0	6,265	363,37
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	10,2500	0,800	8,20
	Փոսային նորոգում հիմքով Պուշկին փողոց				**273,84**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	38,000	0,800	30,40
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	38,0	6,265	238,07
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	6,7100	0,800	5,37
	Փոսային նորոգում հիմքով Ռուսթավելի փողոց				**50,44**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	7,000	0,800	5,60

2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	7,0	6,265	43,86
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	1,2300	0,800	0,98
	Փոսային նորոգում հիմքով Ա.Իսահակյան փողոց Գ.Նժդեհից-Միլիոն				**353,11**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	49,000	0,800	39,20
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	49,0	6,265	306,99
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	8,6600	0,800	6,93
	Փոսային նորոգում հիմքով Սայաթ Նովա փողոց				**208,98**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	29,000	0,800	23,20
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	29,0	6,265	181,69
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	5,1200	0,800	4,10
	Փոսային նորոգում հիմքով Զ.Անդրանիկի փողոց				**622,63**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	86,400	0,800	69,12
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	86,4	6,265	541,30
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	15,2700	0,800	12,22
	Փոսային նորոգում հիմքով Ռումինական փողոց				**407,88**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	56,600	0,800	45,28
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	56,6	6,265	354,60
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	10,0000	0,800	8,00
	Փոսային նորոգում հիմքով Բոնդրև փողոց				**247,92**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	34,400	0,800	27,52
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	34,4	6,265	215,52

3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	6,1000	0,800	4,88
	Փոսային նորոգում հիմքով Մ.Խորենացի փողոց				**165,78**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	23,000	0,800	18,40
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	23,0	6,265	144,10
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	4,1000	0,800	3,28
	Փոսային նորոգում հիմքով Նալբանդյան փողոց				**139,78**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	19,400	0,800	15,52
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	19,4	6,265	121,54
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	3,4000	0,800	2,72
	Փոսային նորոգում հիմքով համայնքապետարանի մուտք/բակ				**1248,14**
1	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	173,200	0,800	138,56
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում միմչև 5 մ2 մակերեսով, h=5սմ /Կտրտել ասֆալտբետոնի եզրերը ,մաքրել հիմնատակը ,երեսպատել բիտումով կտրտած մասերի տեղերը, որից հետո լցնել ա/բետոնը և գլդոնել/ բիտում 4,12տն/1000մ2	$մ^2$	173,2	6,265	1085,10
3	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տն	30,6000	0,800	24,48
	Ընդամենը /հազ.դրամ/				10037,80
	ԱԱՀ	20%			2007,56
	Ընդամենը /հազ.դրամ/				12045,36

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ

հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1

ՀՀ Ֆինանսների նախարարության

գործառնական վարչություն

h/h900252260014

ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ռ Ղազարյան>> ՍՊԸ

ք Վանաձոր, Տավրոս 21 փ 22 տ

<<Էվոկաբանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ

ՀՀ 1660014189780100

ՀՎՀՀ 06958302

---------- Ռ.Ղազարյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
«13» մայիսի 2021թ. կնքված
ՀՀ-ԼՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆԳՐԱՖԻԿ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը **	
		Սկիզբը	Ավարտը
1	Ստեփանավան համայնքի փողոցների վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	30.06.2021թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի
աշխատակազմ» համայնքային կառավարչական
հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ900252260014
ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ռ.Ղազարյան>> ՍՊԸ

ք.Վանաձոր, Տավրոս 21 փ 22 տ

<<Էվոկաբանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ

հհ 1660014189780100

ՀՎՀՀ 06958302

---------- Ա.Աբրահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«13» հունվարի 2021թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177	«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար Ստեփանավան համայնքի փողոցների վերանորոգման աշխատանքների ձեռքբերում						12045360	12045360	12045360	12045360	12045360	12045360	12045360

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
h/h900252260014
ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ռ.Ղազարյան>> ՍՊԸ

ք.Վանաձոր, Տավրոս 21 փ 22 տ

<<Էվոկաբանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ

հհ 1660014189780100

ՀՎՀՀ 06958302

Ա.Արքահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«13» Տարի 2022թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
«13» Դեկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
_____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափմանմիավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն